Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Երեմյան Ֆարմ» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Երեմյան Ֆարմ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երեմյան Ֆարմ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմք»* բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության՝ կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Վերապահումով կարծիքի հիմք

Քանի որ մենք Ընկերության աուդիտոր ենք նշանակվել 2025թ. ընթացքում, մենք հնարավորություն չենք ունեցել հետևելու ֆիզիկական գույքագրմանը կամ այլընտրանքային միջոցներով բավարար տեղեկատվություն ստանալ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կենսաբանական ակտիվների և պաշարների քանակների վերաբերյալ: Քանի որ պաշարների և կենսաբանական ակտիվների սկզբնական մնացորդները ներառվում են վաճառքի ինքնարժեքի և կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունների մեջ, մենք չենք կարողացել որոշել 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տարվա վնասի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների ճշգրտման անհրաժեշտությունը: 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը նույնպես ձևափոխված է՝ վերոնշյալ հարցի հետ կապված:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային*

կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն

դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

13 ապրիլի 2026թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Հասույթ	5	6,010,836	2,651,800
Վաճառքի ինքնարժեք	6	(6,487,832)	(3,126,489)
Համախառն վնաս		**(476,996)**	**(474,689)**
Այլ եկամուտ		250,663	126,139
Կենսաբանական ակտիվների և գյուղատնտեսական արտադրանքի իրական արժեքով չափումից օգուտ		538,540	544,110
Իրացման ծախսեր	7	(577,543)	(300,116)
Վարչական ծախսեր	8	(636,309)	(581,387)
Այլ ծախսեր		(164,196)	(239,053)
Գործառնական գործունեությունից վնաս		**(1,065,841)**	**(924,996)**
Ֆինանսական եկամուտ	9	101,745	56,045
Ֆինանսական ծախսեր	9	(956,268)	(975,249)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	10	556,138	375,155
Վնաս մինչև հարկերը		**(1,364,226)**	**(1,469,045)**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	13	(382,842)	384,124
Տարվա վնաս		**(1,747,068)**	**(1,084,921)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(1,747,068)**	**(1,084,921)**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	13,923,437	14,802,723
Երկարաժամկետ կենսաբանական ակտիվներ	12	2,407,900	1,905,780
Ոչ նյութական ակտիվներ		1,156	1,394
Ստացվելիք շնորհներ	18	-	1,033,340
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ		108,400	2,116
Հետաձգված հարկային ակտիվներ	13	150,564	533,406
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**16,591,457**	**18,278,759**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	1,120,063	1,193,023
Կարճաժամկետ կենսաբանական ակտիվներ	12	397,926	423,188
Ստացվելիք շնորհներ	18	1,135,085	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	1,029,024	968,230
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		27,462	148,010
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**3,709,560**	**2,732,451**
Ընդամենը ակտիվներ		**20,301,017**	**21,011,210**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	16	3,496,250	3,496,250
Լրացուցիչ կապիտալ		564,194	
Կուտակված վնաս		(4,673,719)	(2,926,651)
Ընդամենը սեփական կապիտալ		**(613,275)**	**569,599**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Վարկեր և փոխառություններ	17	13,869,633	13,652,345
Ակտիվներին վերաբերող շնորհներ	18	3,183,261	3,398,549
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**17,052,894**	**17,050,894**
Ընթացիկ			
Վարկեր և փոխառություններ	17	1,495,647	1,920,454
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19	2,365,751	1,470,263
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**3,861,398**	**3,390,717**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**20,301,017**	**21,011,210**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 13-ին.

Դավիթ Երեմյան
Տնօրեն

Մանե Դանիելյան
Լիազոր անձ

«ԵՐԵՄՅԱՆ ՖԱՐՄ»
"ЕРЕМЯН ФАРМ"
"YEREMYAN FARM"
02849267

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	2,000	-	(1,841,730)	(1,839,730)
Տարվա վնաս	-	-	(1,084,921)	(1,084,921)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	**(1,084,921)**	**(1,084,921)**
		-		
Կապիտալի համալրում	3,494,250	-	-	3,494,250
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**3,494,250**	-	-	**3,494,250**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,496,250**	**-**	**(2,926,651)**	**569,599**
Տարվա վնաս	-		(1,747,068)	(1,747,068)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-		**(1,747,068)**	**(1,747,068)**
Բաժնետիրոջից փոխառության զեղչման արդյունքում իրական արժեքի տարբերություն	-	564,194	-	564,194
Գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**564,194**	**-**	**564,194**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,496,250**	**564,194**	**(4,673,719)**	**(613,275)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Տարվա վնաս	(1,747,068)	(1,084,921)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,154,960	799,748
Հիմնական միջոցների օտարումից վնաս	(10,760)	-
Շնորհներից եկամուտ	(215,288)	(101,451)
Ֆինանսական ծախս	956,268	975,249
Ֆինանսական եկամուտ	(101,745)	(56,045)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	382,842	(384,124)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(556,138)	(375,155)
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**(136,929)**	**(226,699)**
Կենսաբանական ակտիվների փոփոխություն	(476,858)	(895,175)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(59,649)	107,400
Պաշարների փոփոխություն	72,960	(529,163)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	1,485,451	710,853
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	**884,975**	**(832,784)**
Վճարված տոկոսներ	(942,204)	(822,630)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(57,229)**	**(1,655,414)**

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման համար վճարներ	(370,960)	(2,097,445)
Ներդրված ավանդներ	-	(657,240)
Մարված ավանդներ	-	842,373
Ստացված տոկոսային եկամուտ	-	12,214
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(370,960)**	**(1,900,098)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր		
Կապիտալի համալրումից մուտքեր	-	3,494,250
Վարկերից և փոխառություններից մուտքեր	328,238	8,124,897
Վարկերի և փոխառությունների մարում	(16,472)	(10,234,555)
Պետական աջակցությունից մուտքեր	-	2,300,000
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**311,766**	**3,684,592**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	(116,423)	129,080
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(4,125)	(9,933)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	148,010	28,863
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**27,462**	**148,010**

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Երեմյան Ֆարմ» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Երեմյան Ֆարմ» ՓԲԸ-ն («Ընկերություն») զբաղվում է կաթնամթերքի և մսամթերքի արտադրությամբ ու վաճառքով:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Երեմյան Ֆարմ» ՓԲԸ-ն («Ընկերություն») փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2021թ.:

Ընկերությունը գործում է «Երեմյան Փրոդաքթս» ապարանքանիշի ներքո, ուղղահայաց ինտեգրմամբ գյուղատնտեսական ընկերություն է, որը հիմնադրվել և գործում է Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունը «Երեմյան Փրոջեքթս» խմբի անդամ է և զբաղվում է կաթնամթերքի, մսի և պատրաստի սննդի արտադրությամբ և իրացմամբ:

2022թ. Ընկերությունը Լոռու մարզի Տաշիր համայնքում մեկնարկեց անասնապահական լայնամասշտաբ համալիրի կառուցումը: Այս համալիրը ներառում է խոշոր եղջերավոր անասունների և խոզերի ֆերմա, սպանդանոց, անասնակերի պահեստ, կերային կուլտուրաների աճեցման համար նախատեսված հողատարածք, ավտոմատ կիթի սրահ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Տաշիրի նախագծում արված ներդրման ընդհանուր արժեքը մոտավորապես 47,204,000 ԱՄՆ դոլար է և մասամբ ֆինանսավորվել է Եվրասիական Զարգացման Բանկի («Բանկ») և Հայաստանի կառավարության համագործակցության արդյունքում՝ գյուղատնտեսական արդյունաբերության ոլորտին աջակցելու և ազգային պարենային անվտանգությունը բարձրացնելուն ուղղված փոխըմբռնման հուշագրի շրջանակում:

2024թ. մայիսի 24-ին «Երեմյան Փրոջեքթսը» պաշտոնապես գործարկեց «Երեմյան Փրոդաքթս» կաթ արտադրող գործարանը Երևանում: Գործարանն ունի օրական մինչև 150,000 լիտր կաթ վերամշակելու հզորություն: Ֆերմայում հավաքված կաթը տեղափոխվում է Ընկերության վերամշակման արտադրամասեր՝ թարմությունը պահպանելու և աղտոտումը կանխելու համար նախատեսված փակ ցիկլային համակարգի միջոցով:

Ընկերության կաթնամթերքը, որը ներառում է կաթ, մածուն, թթվասեր, քամած կաթնաշոռ, կարագ և պանիրների տեսակների (այդ թվում՝ լոռի, սուլուգունի, մոցարելա, ռիկոտա և բուրատա) իրացվում է «Երեմյան Փրոջեքթսի» ռեստորանային կետերի (կապակցված ընկերություններ), սպառողին անմիջապես առաքելու հարթակների և Երևանի խոշոր սուպերմարկետների ցանցերի միջոցով:

Ընկերությունը նաև առաջարկում է մսամթերքի լայն տեսակների, որը ներառում է խոզի և տավարի միս, ինչպես նաև պատրաստի արտադրանք:

Գրանցման և հիմնական գործունեության հասցեն է՝ Հայաստան, Երևան 0009, Տերյան 8 փողոց:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է 343 մարդ (2024թ.՝ 190 մարդ):

Համապատասխանություն և անընդհատություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, կապիտալի նկատմամբ իրավական պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը: 2025թ. Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է 5.4%:

Ղեկավարությունը գնահատել է տնտեսական ընթացիկ միջավայրի ազդեցությունը Ընկերության գործունեության վրա և արտացոլել է դա սույն ֆինանսական հաշվետվություններում: Սակայն տնտեսական և քաղաքական հետագա իրավիճակը կարող է տարբերվել ներկայիս ակնկալիքներից, և նման տարբերությունները կարող են ազդել Ընկերության ֆինանսական վիճակի, արդյունքի և դրամական հոսքերի վրա:

3 Նոր կամ վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՍ 21 *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ»* ստանդարտի փոփոխությունը՝ կապված *«Փոխանակելիության բացակայության»* հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

  2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»* ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական*

հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը,
- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ,
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ,
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում:

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»*:

Ի հավելումն, ՀՀՄՍ 7 *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»* ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Ընկերությունը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար),
- *«Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար),
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար),
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»* (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հոդվածներ

4.1 Պատրաստման հիմքերը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ կենսաբանական ակտիվների, որոնք չափվել են իրական արժեքով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը կարող են ֆինանսական կորուստների և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունների պատճառ հանդիսանալ, որոնք կարող են բխել կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքներից: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսությանն անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, , դատական գործընթացները՝ կապված վնասի չեզոքացման կամ մեղմացման անկարողության հետ և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Ընկերությունը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Ընկերության ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

4.3 Արժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Եվրո	449.01	413.89

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

4.4 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում կաթնամթերքի, մսամթերքի և այլ ապրանքների վաճառքից և խոշոր եղջերավոր անասունների պահպանության ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունները բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Կաթնամթերքի, մսամթերքի և այլ ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է ժամանակի մեջ որևէ պահի, երբ էական ռիսկերը և սեփականության իրավունքի հետ կապված օգուտները փոխանցվում են հաճախորդին:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը:

4.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները,

տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են այդ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	20 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5-8 տարի
Տնտեսական գույք	-	1-8 տարի
Այլ	-	1-8 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի մաշվում:

Հիմնական միջոցների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

4.6 Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվը սկզբնական ճանաչման պահին և յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները:

Ընկերության կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանքը չափվում է բերքահավաքի պահին իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները:

Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի՝ վաճառքի հետ կապված ծախսումները հանած իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև կենսաբանական

ակտիվի՝ վաճառքի հետ կապված ծախսումները հանած իրական արժեքի փոփոխությունից, ներառվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որում դրանք առաջացել են:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտադրողական անասունները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ ակտիվներ, իսկ մսատու անասունները և չհավաքված բերքը՝ որպես ընթացիկ ակտիվներ:

4.7 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք՝ իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով չափվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ արտարժույթի փոխարժեքային տարբերությունից արդյունքում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային դեբիտորական պարտքերը:

Ներկայացված ժամանակաշրջաններում Ընկերությունն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ չունի:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»:

ՖՀՄՍ 9-ին համապատասխան՝ Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով: Ակնկալվող պարտքային կորուստները դրամական պակասորդների ներկա արժեքն են, որն իրենից ներկայացնում է պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը: Դրամական պակասորդները զեղչվում են ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (կամ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով՝ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի համար):

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառման մանրամասն վերլուծության համար տե՛ս Ծանոթագրություն 23.2-ը:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է), եթե Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը չի դասակարգել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսների հետ կապված ծախսերը ներառվում են ֆինանսական ծախսում կամ ֆինանսական եկամտում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Ընկերությունն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություն չունի:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

4.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները, դրամական միջոցները՝ ճանապարհին, ցպահանջ ավանդները, ինչպես նաև այլ կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումների հետ, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով:

4.10 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս: Ընկերությունը սկսում է կապիտալացնել փոխառության ծախսումները որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս՝ մեկնարկի ամսաթվին, երբ Ընկերությունն առաջին անգամ բավարարում է հետևյալ բոլոր պայմանները. ակտիվի համար կատարում է ծախսեր, կրում է փոխառության ծախսումներ, ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են՝ ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար:

Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները փոխառնում է ընդհանուր նպատակներով և օգտագործում է որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով, Ընկերությունը կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշում է՝ այդ ակտիվի գծով ծախսերի նկատմամբ կիրառելով կապիտալացման դրույքը: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության չմարված փոխառություններին վերաբերող փոխառության ծախսումների միջին կշռված մեծությունն է, բացառությամբ այն փոխառությունների, որոնք բացառապես կատարվել են որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով:

Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է այն ժամանակաշրջանի ընթացքում, որի ժամանակ Ընկերությունը դադարեցնում է որակավորվող ակտիվների վրա կատարվող աշխատանքները: Փոխառության ծախսումների կապիտալացումը դադարեցվում է, երբ էական բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ են որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար, ավարտված են:

4.11 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանն Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շենքի կառուցման պայմանով հողի հետ կապված պետական շնորհները ճանաչվում են այդ շենքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ արտացոլելով այն ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են համապատասխան ծախսերը:

Կենսաբանական ակտիվներին վերաբերող պետական շնորհներ

Կենսաբանական ակտիվները, որոնք չափվում են իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումներ, հաշվառվում են ՀՀՄՍ 41 *«Գյուղատնտեսություն»* ստանդարտի համաձայն:

Կենսաբանական ակտիվին, որը չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, վերաբերող ոչ պայմանական պետական շնորհը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Եթե կենսաբանական ակտիվին, որը չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, վերաբերող պետական շնորհը պայմանական է, ներառյալ, երբ պետական շնորհը Ընկերությունից պահանջում է չզբաղվել որոշակի գյուղատնտեսական գործունեությամբ, ապա Ընկերությունը պետական շնորհը ճանաչում է շահույթում կամ վնասում այն և միայն այն դեպքում, երբ բավարարված են պետական շնորհին կցված պայմանները:

4.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.13 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.14 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժիններ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը:

Լրացուցիչ կապիտալը ներառում է սեփականատիրոջից ստացված անտոկոս փոխառությունների իրական և անվանական արժեքների միջև տարբերությունը:

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը և վնասը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

4.15 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

4.16 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են իրատեսական:

4.16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված նշանակալի դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյոք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

4.16.2 Գնահատման անորոշություն

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացն ընդգրկում է գնահատումների և

ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունն իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունն օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում:

Իրական արժեքի չափման վերաբերյալ բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 24:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում է մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և մնացորդային արժեքների գնահատումները՝ հիմնվելով ակտիվների ակնկալվող օգտակարությունից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության վերանայումը իրականացվում է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվի դրությամբ հայտնի կլիմայական փոփոխությունը և շրջակա միջավայրի կանոնակարգերը, որոնք Ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի վրա չեն ունեցել էական ազդեցություն:

Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Ընկերությունն օգտագործում է դատողություն՝ գնահատելու ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստները: Ակնկալվող պարտքային կորուստները չափվում են անաչառ և հավանականության միջին կշռված գումարով, դրամի ժամանակային արժեքով և խելամիտ ու հիմնավորված տեղեկությամբ հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ կապված անցյալ իրադարձությունների, ներկա պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների հետ: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի նույնատիպ մոդել ունեն (օրինակ՝ ըստ աշխարհագրական դիրքի, ծառայության տեսակի, հաճախորդի տեսակի և վարկանիշի և պարտքային ապահովագրության տեսակների):

Ակնկալվող պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական միջոցների չվճարման հավանականության միջին կշռված ներկա արժեք յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում: Ակնկալվող պարտքային կորուստները հիմնականում հաշվարկվում են՝ օգտագործելով վիճակագրական մոդելը, որը հիմնվում է ռիսկային երեք հիմնական պարամետրերի վրա. պարտազանցման հավանականություն, պարտազանցման ժամանակ վնասի և պարտազանցման դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը:

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Ընկերության՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Ընկերությունը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար: Այս տեղեկությունը ներառում է մակրոտնտեսական գործոնները (գործազրկության և գնաճի մակարդակը) և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումը: Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսվող գնահատականներում:

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Ընկերության պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել հաճախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ տեղեկությունը բացահայտված է ծանոթագրություն 23.2-ում:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

5 Հասույթ

	2025թ.	2024թ.
Կաթնամթերքի վաճառքից հասույթ	4,602,552	2,166,426
Մսամթերքի վաճառքից հասույթ	1,212,311	318,595
Ծառայությունների մատուցումից հասույթ	102,872	143,480
Այլ	93,101	23,299
	6,010,836	**2,651,800**

Ընկերության հասույթն ըստ ճանաչման ժամկետայնության ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Ժամանակի մեջ ինչ-որ պահի փոխանցվող ապրանքներ	5,907,964	2,508,320
Ժամանակի ընթացքում փոխանցվող ծառայություններ	102,872	143,480
Ընդամենը	**6,010,836**	**2,651,800**

Ստորև ներկայացված գործարքային գների համակարգված գումարները վերաբերում են գործող պայմանագրերից առաջացող կատարման պարտականություններին, որոնք դեռևս բավարարված չեն կամ մասամբ են բավարարված 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ.	2024թ.
Հաջորդ տարում ճանաչման ենթակա հասույթ	101,166	514,708

6 Վաճառքի ինքնարժեք

	2025թ.	2024թ.
Նյութերի ինքնարժեք	4,480,939	1,749,916
Մաշվածություն և ամորտիզացիա	1,045,674	728,290
Հատուցումներ աշխատակիցներին	824,356	449,242
Պահպանման գծով ծախսեր	136,863	199,041
	6,487,832	**3,126,489**

7 Իրացման ծախսեր

	2025թ.	2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	249,581	63,044
Մարքեթինգային ծախսեր	161,372	124,866
Մաշվածություն և ամորտիզացիա	39,823	29,477
Ապահովագրական ծախսեր	30,652	60,987
Այլ	96,115	21,742

	2025թ.	2024թ.
	577,543	**300,116**

8 Վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	218,959	236,028
Հատուցումներ աշխատակիցներին	191,226	114,954
Մաշվածություն և ամորտիզացիա	68,937	42,244
Մասնագիտական ծառայություններ	41,262	99,436
Գործուղման գծով ծախսեր	28,665	43,376
Չվերականգնվող հարկեր	14,692	4,676
Այլ	72,568	40,673
	636,309	**581,387**

9 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2025թ.	2024թ.
Հաշվեգրված շնորհներից դեբիտորական պարտքի զեղչման հակադարձում	101,745	43,831
Կարճաժամկետ բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	-	12,214
Ընդամենը ֆինանսական եկամուտ	**101,745**	**56,045**
Բանկային վարկերի գծով տոկոսային ծախսեր	966,312	1,100,991
Ստացվելիք շնորհների իրական արժեքի ճշգրտում	-	210,491
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**966,312**	**1,311,482**
Հանած՝ կապիտալացված փոխառությունների ծախսումներ	-	(336,233)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**966,312**	**975,249**
Զուտ ֆինանսական ծախսեր	**864,567**	**919,204**

10 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ

	2025թ.	2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	(2,980)	(56,684)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	559,118	431,839
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	**556,138**	**375,155**

11 Հիմնական միջոցներ

	Հող	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրա-տնտեսական գույք և այլն	Անավարտ շինարարություն	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	867,185	264,797	1,740,095	252,005	8,424,292	62,084	11,610,458
Ավելացում	3,660	1,231,824	1,827,033	405,748	676,464	-	4,144,729
Օտարում	-	(25,548)	-	-	-	-	(25,548)
Ներքին շարժ	-	8,697,326	-	-	(8,697,326)	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**870,845**	**10,168,399**	**3,567,128**	**657,753**	**403,430**	**62,084**	**15,729,639**
Ավելացում	1,430	13,647	151,931	98,762	-	19,900	285,670
Օտարում	-	-	(16,210)	-	-	-	(16,210)
Ներքին շարժ	-	-	-	403,430	(403,430)	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**872,275**	**10,182,046**	**3,702,849**	**1,159,945**	**-**	**81,984**	**15,999,099**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	19,895	125,883	3,614	-	3,324	152,716
Տարվա հաշվարկ	-	368,388	367,209	59,636	-	4,515	799,748
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(25,548)	-	-	-	-	(25,548)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**362,735**	**493,092**	**63,250**	**-**	**7,839**	**926,916**
Տարվա հաշվարկ	-	511,700	497,427	139,531	-	5,538	1,154,196
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(5,450)	-	-	-	(5,450)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**874,435**	**985,069**	**202,781**	**-**	**13,377**	**2,075,662**

	Հող	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրա-տնտեսական գույք և այլն	Անավարտ շինարարություն	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք							
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**870,845**	**9,805,664**	**3,074,036**	**594,503**	**403,430**	**54,245**	**14,802,723**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**872,275**	**9,307,611**	**2,717,780**	**957,164**	**-**	**68,607**	**13,923,437**

Բանկային վարկերն ապահովելու նպատակով Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 13,854,830 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,748,478 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

	2025թ.	2024թ.
Վաճառքի ինքնարժեք	1,045,436	728,027
Իրացման ծախսեր	39,823	29,477
Վարչական ծախսեր	68,937	42,244

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները Լոռու մարզում հողերի ենթավարձակալության համար մինչև 2036թ. նոյեմբերը և 2041 թ. մարտը վճարված կանխավճարներն են:

12 Կենսաբանական ակտիվներ

12.1 Երկարաժամկետ կենսաբանական ակտիվներ

	Սերնդատու կովեր	Սերնդատու խոզեր	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	1,287,030	104,428	1,391,458
Ձեռքբերման և աճեցման գծով ծախսեր	236,430	7,262	243,692
Դուրս գրման հետևանքով նվազում	(3,064)	-	(3,064)
Իրական արժեքի փոփոխություններից օգուտ	213,454	60,240	273,694
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**1,733,850**	**171,930**	**1,905,780**
Ձեռքբերման և աճեցման գծով ծախսեր	209,100	25,963	235,063
Դուրս գրման հետևանքով նվազում	(389,073)	(311)	(389,384)
Վաճառքի և մորթի հետևանքով նվազում	(350,745)	(48,378)	(399,123)
Իրական արժեքի փոփոխություններից օգուտ	983,518	72,046	1,055,564
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**2,186,650**	**221,250**	**2,407,900**

12.2 Կարճաժամկետ կենսաբանական ակտիվներ

	Մսատու խոշոր եղջերավոր անասուններ	Մսատու խոզեր	Չհավաքված բերք	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	12,000	-	30,335	42,335
Ձեռքբերման և աճեցման գծով ծախսեր	25,920	379,104	86,768	491,792
Վաճառքի, մորթի և բերքահավաքի հետևանքով նվազում	(22,635)	(260,620)	(30,335)	(313,590)
Իրական արժեքի փոփոխություններից օգուտ	(785)	203,436	-	202,651
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**14,500**	**321,920**	**86,768**	**423,188**

	Մսատու խոշոր եղջերավոր անասուններ	Մսատու խոզեր	Չհավաքված բերք	Ընդամենը
Ձեռքբերման և աճեցման գծով ծախսեր	149,652	736,169	424,427	1,310,248
Դուրս գրման հետևանքով նվազում	(2,447)	(131,504)		(133,951)
Վաճառքի, մորթի և բերքահավաքի հետևանքով նվազում	(144,790)	(636,318)	(426,762)	(1,207,870)
Իրական արժեքի փոփոխություններից օգուտ	8,185	18,463	(20,337)	6,311
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**25,100**	**308,730**	**64,096**	**397,926**

Անասունների գլխաքանակը հետևյալն է.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սերնդատու խոզեր	904	696
Մսատու խոզեր	4,062	4,528
Սերնդատու խոշոր եղջերավոր անասուններ	1,883	2,044
Մսատու խոշոր եղջերավոր անասուններ	76	58

Ընկերության հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի տարեկան բերքի ծավալները հետևյալն են (տոննաներով).

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սիլոս	12,247	5,637
Այլ	891	509

Անասունների և գյուղատնտեսական մշակաբույսերի իրական արժեքի չափման հիմնական մուտքային տվյալները, ինչպես նաև այդ մուտքային տվյալների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ զգայունությունը, բացահայտված են Ծանոթագրություն 24.2-ում:

Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կենսաբանական ակտիվները գրավադրված են բանկային վարկերն ապահովելու նպատակով:

13 Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում

Շահութահարկի (ծախս) փոխհատուցում

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	(382,842)	384,124
Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	**(382,842)**	**384,124**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների)	(1,364,226)		(1,469,045)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	(245,561)	18	(264,428)	18
Չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտ), զուտ	(137,281)	10	648,552	(44)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(382,842)	**28**	**384,124**	**(26)**

Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	533,406	149,282
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս) փոխհատուցում	(382,842)	384,124
Տարեվերջի մնացորդ	**150,564**	**533,406**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	53,902	342	54,244
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18,571	(2,493)	16,078
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,301	7,412	13,713
Վարկեր և փոխառություններ	62,616	3,913	66,529
Ակտիվներին վերաբերող շնորհներ	23,503	(23,503)	-
Հարկային վնասներ	368,513	583,564	952,077
	533,406	**569,235**	**1,102,641**
Հետաձգված հարկային ակտիվների գնահատում	-	(952,077)	(952,077)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	**533,406**	**(382,842)**	**150,564**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	66,273	(12,371)	53,902
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,602	14,969	18,571

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,368	3,933	6,301
Վարկեր և փոխառություններ	28,231	34,385	62,616
Ակտիվներին վերաբերող շնորհներ	-	23,503	23,503
Հարկային վնասներ	48,808	319,705	368,513
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	**149,282**	**384,124**	**533,406**

14 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Կեր	683,313	444,446
Հումք	246,848	222,202
Արտադրանք	43,771	295,310
Վառելիք	11,695	47,744
Այլ	134,436	183,321
Ընդամենը պաշարներ	**1,120,063**	**1,193,023**

15 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	819,062	915,303
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(89,322)	(103,171)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**729,740**	**812,132**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	232,909	102,102
Կանխավճարված հարկեր	66,375	53,996
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**299,284**	**156,098**
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**1,029,024**	**968,230**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 2 ամիս (2024թ.՝ 4 ամիս): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

	2025թ.	2024թ.
Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ	103,171	20,013
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում (հակադարձում)	(13,849)	83,158
Կորուստների գծով պահուստը, տարեվերջի մնացորդ	**89,322**	**103,171**

Ծանոթագրություն 23.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով:

16 Բաժնետիրական կապիտալ

16.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր	Սովորական բաժնետոմսեր
	2025թ.	2024թ.
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 34,962,500 ՀՀ դրամ (2024թ.՝ յուրաքանչյուրը՝ 34,962,500 ՀՀ դրամ)	100	100

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի: Ընկերության միակ բաժնետերն է «Հայր և Որդի Երեմյաններ» ՍՊԸ-ն:

Ընկերության բաժնետոմսերը գրավադրվել են Եվրասիական Զարգացման Բանկից ստացված վարկի ապահովման համար (տե՛ս Ծանոթագրություն 17):

16.2 Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալը ձևավորվել է Ընկերության բաժնետիրոջից ստացված անտոկոս փոխառությունների իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունից: Իրական արժեքը հաշվարկվել է՝ զեղչելով դրամական միջոցների ապագա հոսքերը 13.3% տոկոսադրույքով (տե՛ս ծանոթագրություն 24.1):

17 Վարկեր և փոխառություններ

	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Բանկային վարկեր	13,197,603	13,652,345	902,031	1,012,468
Փոխառություններ բաժնետիրոջից	672,030	-	-	907,986
Փոխառություններ կապակցված կողմերից	-	-	593,616	-
Ընդամենը վարկեր և փոխառություններ	**13,869,633**	**13,652,345**	**1,495,647**	**1,920,454**

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 2-ում, 2022թ. Ընկերությունը Լոռու մարզի Տաշիր համայնքում մեկնարկեց անասնապահական լայնամասշտաբ համալիրի կառուցումը: Այս համալիրը ներառում է խոշոր եղջերավոր անասունների և խոզերի ֆերմա, սպանդանոց, անասնակերի պահեստ, կերային կուլտուրաների աճեցման համար նախատեսված հողատարածք, ավտոմատ կիթի սրահ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Համալիրի կառուցումը մասամբ ֆինանսավորվել է Եվրասիական Զարգացման

Բանկի և Հայաստանի կառավարության համագործակցության արդյունքում՝ գյուղատնտեսական արդյունաբերության ոլորտին աջակցելու և ազգային պարենային անվտանգության բարձրացմանն ուղղված փոխըմբռնման հուշագրի շրջանակում:

Այս նախագիծը ֆինանսավորելու առնչությամբ Ընկերությունը Եվրասիական Զարգացման Բանկի հետ վարկային համաձայնագիր է կնքել: Վարկն ունի 7.18% տարեկան արդյունավետ տոկոսադրույք (պայմանագրային տոկոսադրույքը՝ տարեկան 7.5%, որից 2.5%-ը սուբսիդավորվել է Բանկի կողմից մինչև 2025թ. հունիսի 13-ը) և ենթակա է մարման 2032թ. հունիսի 30-ին: Վարկն ապահովված է Ընկերության բաժնետոմսերի, հիմնական միջոցների և կենսաբանական ակտիվների, ինչպես նաև Ընկերությանը կապակցված կողմերին պատկանող այլ ակտիվների գրավադրմամբ:

Բանկի հետ վարկային պայմանագրի պայմանների համաձայն՝ Ընկերությունը ենթակա է որոշակի գործառնական սահմանափակումների, որոնք նկարագրված են Ծանոթագրություն 25-ում:

Ընկերությունը պարբերաբար ֆինանսավորում է ստանում կապակցված կողմերից՝ Ընկերության ընթացիկ գործառնական պահանջները բավարարելու նպատակով:

Բաժնետիրոջից ստացված անտոկոս փոխառությունը զեղչվել է 13.3% շուկայական տոկոսադրույքով և իրական և անվանական արժեքների տարբերությունը ճանաչվել է սեփական կապիտալում որպես բաժնետիրոջ կողմից կապիտալի համալրում: Փոխառությունը ստացվել է ՀՀ դրամով և ըստ պայմանագրի ենթակա է մարման մինչև տասը տարվա մեջ, սակայն ղեկավարությունն ակնկալում է որ կմարի այն ավելի վաղ:

Կապակցված կողմերից փոխառությունը ստացվել է «Էկո Ֆարմ» ՍՊԸ-ից՝ անտոկոս և ցպահանջ պայմանով:

Վարկերի և փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Իրական արժեք	14,832,547	14,805,793
Հաշվեկշռային արժեք	15,365,280	15,572,799

Իրական արժեքը հաշվարկվում է՝ զեղչելով դրամական հոսքերը 8.35%-ով դոլարով արտահայտված վարկերի համար և 13.3%-ով՝ դրամային փոխառությունների համար:

Տե՛ս Ծանոթագրություն 23.1՝ Ընկերության արտարժութային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվության համար:

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	2025թ.	2024թ.
Հունվարի 1-ի դրությամբ	15,572,799	17,831,175
Դրամային հոսքերից		
Ստացված գումար	328,238	8,124,897
Մայր գումարի մարումներ	(16,472)	(10,234,555)
Վճարված տոկոսներ	(942,204)	(822,630)
Ոչ դրամային հոսքերից		
Վերադասակարգում կրեդիտորական պարտքերից	593,616	-
Տոկոսի հաշվեգրում	956,268	1,100,991
Սկզբնական ճանաչումից իրական արժեքի ճշտում	(564,194)	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(562,771)	(427,079)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**15,365,280**	**15,572,799**

18 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հունվարի 1-ի դրությամբ	3,398,549	-
Ստացված գումար	-	2,300,000
Հաշվեգրված	-	1,200,000
Կրեդիտագրված շահույթին կամ վնասին	(215,288)	(101,451)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,183,261**	**3,398,549**

2022թ. հունիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը և Ընկերությունը պայմանագիր կնքեցին ՝ «Անասնապահության ոլորտում ներդրումային ծրագրերի աջակցության փորձնական ծրագրի» շրջանակում, որը հաստատվել է կառավարության 2022թ. մարտի 3-ի թիվ 276-Լ և 2021թ. դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշումներով:

Պայմանագրի պայմանների համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է անասնապահության ոլորտում կապիտալ ներդրումներ կատարել՝ համաձայն հաստատված ծրագրում սահմանված շրջանակի, ժամանակացույցի և ընթացակարգերի: Դրա դիմաց Էկոնոմիկայի նախարարությունը պարտավորվել է փոխհատուցում տրամադրել համապատասխան ներդրումների համար՝ ծրագրում սահմանված պայմաններին համապատասխան: Փոխհատուցումը սահմանափակվում է կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի առավելագույնը 40%-ով, որն ընդհանուր առմամբ չպետք է գերազանցի 3.5 միլիարդ ՀՀ դրամը:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ստացվելիք շնորհների մնացորդում ներառված գումարն Ընկերությունն ակնկալում է որ կփոխհատուցվի 2026թ.-ին:

Դրամաշնորհային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ենթակա է մշտադիտարկման երեք տարի ժամկետով: Ծրագրի պահանջները չկատարելու կամ սահմանված ժամկետներում պահանջվող հաշվետվությունները չներկայացնելու դեպքում՝ տրամադրված շնորհի գումարը կարող է դառնալ վերադարձման ենթակա պետական բյուջե:

Պետական շնորհի այն մասը, որը վերաբերում է հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ կառուցմանը, ճանաչվում է շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով՝ համապատասխան ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Իրական արժեքով չափվող կենսաբանական ակտիվների համար հատկացված մասը հետաձգվում է և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ շնորհի պայմանները բավարարվում են՝ վերը նկարագրված երեք տարվա համապատասխանության ժամանակահատվածում:

19 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,908,407	808,360
Հաճախորդներից կանխավճարներ	101,166	514,708
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	192,805	36,064
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	163,373	111,131
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**2,365,751**	**1,470,263**

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 5 ամիս (2024թ.՝ 4 ամիս): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

20 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են բաժնետիրոջը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

20.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է «Հայր և Որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%: Ընկերության վերջնական վերահսկողն է Դավիթ Երեմյանը:

20.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Բաժնետերեր		
Ապրանքների վաճառք	1,519,852	330,496
Ծառայությունների ձեռքբերում	44,169	55
Փոխառություններից մուտքեր	328,238	2,428,245
Փոխառությունների մարում	-	3,287,880
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ապրանքների վաճառք	41,698	997,947
Ծառայությունների մատուցում	101,000	138,230
Ապրանքների և հումքի ձեռքբերում	1,334,263	180,407
Ծառայությունների ձեռքբերում	169,555	215,891

Մնացորդներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Բաժնետերեր		
Փոխառություններ	672,030	907,986
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	393,611
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Փոխառություններ	593,616	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	107,372	17,073
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	948,342	596,946

Ընկերության վերջնական վերահսկող և տնօրեն՝ Դավիթ Երեմյանը երաշխավորել է Եվրասիական Զարգացման Բանկից ստացված բանկային վարկերը:

Հիմնական ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	54,987	23,782
Աշխատավարձի գծով պարտավորություն	8,351	4,259

21 Պայմանականություններ

21.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

22 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.8-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր [1]	729,740	812,132
Հաշվեգրված շնորհներ	1,135,085	1,033,340
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,462	148,010
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**1,892,287**	**1,993,482**

[1] այս գումարներն արտացոլում են միայն առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, որոնք հանդիսանում են ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	15,365,280	15,572,799
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,071,780	919,491
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	**17,437,060**	**16,492,290**

Ընկերության ֆինանսական գործիքների ռիսկերի նկարագրությունը՝ ներառյալ ռիսկի կառավարման նպատակները և քաղաքականությունը, արտացոլված են Ծանոթագրություն 23-ում:

23 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունը և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

23.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսավորման գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից: Բացի այդ Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով վարկ, որն օգտագործվել է գործարանի զարգացումը ֆինանսավորելու համար:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարները փոխարկվում են հայկական դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	73,234
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**-**	**-**	**73,234**
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	14,099,634	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,896	38,597	-

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	14,101,530	38,597	-
Զուտ արդյունք	**(14,101,530)**	**(38,597)**	**73,234**

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	77,349	-	35,914
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**77,349**	**-**	**35,914**
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	14,664,813	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,810	13,145	24,633
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**14,668,623**	**13,145**	**24,633**
Զուտ արդյունք	**(14,591,274)**	**(13,145)**	**11,281**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	1,410,153	1,459,127	3,860	1,315

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

23.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից, որին առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբե4.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	729,740	812,132
Ստացվելիք շնորհներ	1,135,085	1,033,340
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,462	148,010
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**1,892,287**	**1,993,482**

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով: Վերոհիշյալ բանկային մնացորդները գծով ակնկալվող պարտքային կորուստը համարվում է աննշան:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով:

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով նմանատիպ կորստի ձևերով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորման ժամկետանց օրերից: Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով նախորդ տարվա վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Ելնելով վերը նկարագրվածից՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակներում.

31 դեկտեմբերի 2025թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	1%	478,636	5,998
1 ամսից 2 ամիս	10%	191,610	19,942
2 ամսից 6 ամիս	24%	72,020	17,153

31 դեկտեմբերի 2025թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
6 ամսից մինչև 1 տարի	43%	53,487	22,920
1 տարուց ավելի	100%	23,309	23,309
		819,062	**89,322**

31 դեկտեմբերի 2024թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	4%	352,864	15,209
1 ամսից 2 ամիս	9%	432,051	40,687
2 ամսից 6 ամիս	23%	95,562	22,190
6 ամսից մինչև 1 տարի	58%	23,109	13,368
1 տարուց ավելի	100%	11,717	11,717
		915,303	**103,171**

Առևտրային դեբիտորական պարտքերը ներառում են մեծ թվով հաճախորդներ, հիմնականում Հայաստանի խոշոր սուպերմարկետների ցանցեր:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

23.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

2025թ.	Առևտրային կրեդիտորական պարտքեր	Փոխառություններ կապակցված կողմերից	Փոխառություններ բաժնետիրոջից	Բանկային վարկեր	Ընդամենը
Արդյունավետ տոկոսադրույք	**Անտոկոս**	**Անտոկոս**	**13.31%**	**7.04%**	
Մինչև 6 ամիս	2,071,780	593,616	-	520,610	3,186,006
6 ամսից մինչև 1 տարի	-	-	-	520,610	520,610
1-2 տարի	-	-	-	1,041,221	1,041,221
2-5 տարի	-	-	741,734	9,508,739	10,250,473

2025թ.	Առևտրային կրեդիտորական պարտքեր	Փոխառություններ կապակցված կողմերից	Փոխառություններ բաժնետիրոջից	Բանկային վարկեր	Ընդամենը
Ավելի քան 5 տարի	-	-	494,489	7,124,819	7,619,308
	2,071,780	**593,616**	**1,236,223**	**18,715,999**	**22,617,618**

2024թ.	Առևտրային կրեդիտորական պարտքեր	Փոխառություններ բաժնետիրոջից	Բանկային վարկեր	Ընդամենը
Արդյունավետ տոկոսադրույք	**Անտոկոս**	**Անտոկոս**	**6.8%**	
Մինչև 6 ամիս	919,491	907,986	382,232	2,209,709
6 ամսից մինչև 1 տարի	-	-	1,553,975	1,553,975
1-2 տարի	-	-	2,974,144	2,974,144
2-5 տարի	-	-	8,000,941	8,000,941
Ավելի քան 5 տարի	-	-	5,601,870	5,601,870
	919,491	**907,986**	**18,513,162**	**20,340,639**

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 2-3 ամսվա ընթացքում:

Ընկերությունը մշակել է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով: Ընկերությունը՝ «Հայր և Որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի հետ, կնքել է փոխառության շրջանակային պայմանագիր, համաձայն որի բաժնետերը համաձայնվում է Ընկերությանն ըստ անհրաժեշտության տրամադրել մինչև 9,000,000 ԱՄՆ դոլարին համարժեք անտոկոս փոխառություն:

24 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

24.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Ընկերության տոկոսային վարկերի և փոխառությունների իրական արժեքները որոշվում են զեղչված դրամական հոսքերի մեթոդի կիրառմամբ՝ օգտագործելով զեղչման տոկոսադրույքը, որն արտացոլում է թողարկողի փոխառության տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Կապակցված կողմերից ստացված անտոկոս փոխառությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Բաժնետիրոջից ստացված փոխառությունը զեղչվել է 13.3%-ով (ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված շուկայական տոկոսադրույքը՝ ՀՀ դրամով արտահայտված երկարաժամկետ վարկերի համար):

Ընկերության ֆինանսկան գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

24.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Կենսաբանական ակտիվներ (2-րդ մակարդակ)

Կենսաբանական ակտիվների իրական արժեքը պատկանում է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակի չափումներին: Կենսաբանական ակտիվների իրական արժեքի չափման համար օգտագործվում է նմանատիպ ակտիվների շուկայական գները: 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում գնահատման մեթոդում փոփոխություններ չեն եղել:

Կենսաբանական ակտիվների և գյուղատնտեսական մշակաբույսերի իրական արժեքի չափման հիմնական մուտքային տվյալները, ինչպես նաև այդ մուտքային տվյալների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ զգայունությունը, բացահայտված են ստորև:

Կենսաբանական ակտիվների և գյուղատնտեսական արտադրանքի իրական արժեքը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում իրական արժեքը՝ հանած կենդանիների վաճառքի գծով գնահատված ծախսերը, որոշվում է վերջիններիս ֆիզիոլոգիական բնութագրերի, պոտենցիալ արտադրողականության վերաբերյալ ղեկավարության ակնկալիքների և նմանատիպ բնութագրերով կենդանիների շուկայական գների հիման վրա:

Խոշոր եղջերավոր անասունների իրական արժեքի որոշման ժամանակ օգտագործվել են հետևյալ շուկայական արժեքները.

Խոշոր եղջերավոր անասուն	Շուկայական գին (ՀՀ դրամ)
Հղի երինջ	1,500,000
Կով	1,000,000
9 ամսականից 1 տարեկան հորթ	750,000
6-9 ամսական հորթ	500,000
3-5 ամսական հորթ	350,000 - 450,000
Մինչև 2 ամսական հորթ	300,000

Խոզերի իրական արժեքի որոշման ժամանակ օգտագործվել են հետևյալ շուկայական արժեքները.

Կենդանու կարգավիճակ	Շուկայական գին (ՀՀ դրամ)
Վարազ	1,500,000
Մայր խոզ	225,000
4-6 ամսական մայրացու	225,000
Մինչև 4 ամսական մսատու գոճի	50,000 - 100,000

Եթե խոշոր եղջերավոր անասունների և խոզերի իրական արժեքները որոշելիս օգտագործված հիմնական ենթադրությունները 10%-ով բարձր/ցածր լինեին, իսկ մյուս բոլոր փոփոխականներն անփոփոխ մնային, կենսաբանական ակտիվների մնացորդը և տարվա շահույթը կամ վնասը կփոփոխվեին հետևյալ չափով.

	2025թ.	2024թ.
Խոզեր	52,998	49,385
Խոշոր եղջերավոր անասուններ	221,175	174,835

Իրական արժեքը՝ հանած բերքահավաքի պահին գյուղատնտեսական արտադրանքի գծով գնահատված ծախսերը, հաշվարկվում է հավաքված բերքի քանակի և այդ վայրում բերքահավաքի պահին կամ մոտավորապես այդ ժամանակ տեղի ունեցած գործարքների գների հիման վրա և ճշգրտվում է բերքահավաքի պահին գնահատված վաճառքի գծով ծախսերով: Եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չհավաքված բերքի վրա կատարված սկզբնական ծախսերից հետո կենսաբանական փոխակերպումը աննշան է (օրինակ՝ ցանքը կատարվել է հաշվետու ժամանակաշրջանից անմիջապես առաջ), չհավաքված բերքը հաշվառվում է սկզբնական արժեքով:

25 Կապիտալի ռիսկի քաղաքականություն և ընթացակարգեր

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված Ծանոթագրություն 17-ում:

Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից:

Վարկային պայմանագրերով սահմանափակումներ

Բանկի հետ կնքված վարկային պայմանագրի պայմանների համաձայն՝ Ընկերությունը ենթակա է որոշակի գործառնական սահմանափակումների: Առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության՝ Ընկերությունը չի կարող.

(i) նվազեցնել իր կանոնադրական կապիտալը (բացառությամբ օրենքով պահանջվող դեպքերի),
(ii) մեկ օրացուցային տարվա ընթացքում օտարել 50,000 ԱՄՆ դոլարից ավելի արժեք ունեցող ակտիվներ,
(iii) բաժնետիրոջը բաշխել շահաբաժիններ կամ այլ շահույթ, կամ
(iv) երրորդ կողմերին տրամադրել վարկեր կամ ֆինանսական օգնություն, ձեռք բերել երրորդ կողմի մուրհակներ կամ մասնակցել գործարքների, որոնք հանգեցնում են երրորդ կողմերի ֆինանսական պարտքի առաջացմանը Ընկերության նկատմամբ:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Զուտ պարտք		
Փոխառություններ	15,365,280	15,572,799
Հանած՝ ստորադաս վարկ	(672,030)	(907,986)
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(27,462)	(70,661)
	14,665,788	**14,594,152**
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	(613,275)	569,599

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Գումարած՝ ստորադաս վարկ	672,030	907,986
	58,755	**1,477,585**
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	**250**	**10**